

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)



International Organization for Migration (IOM)  
The UN Migration Agency


ՄԱԿ-Ի ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ





International Organization for Migration (IOM)  
The UN Migration Agency



<p>ՄԱԿ-Ի ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)</p>
---	---

**ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԱՏԿԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2016 Թ.**

*(Ըստ 2016թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված  
հետազոտության կշռված արդյունքների)*

Պատրաստվել է՝  
Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ

Երևան - 2019

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՍՍ) յուրաքանչյուր տարի իրականացնում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (ՏՏԿԱՀ) և ամենամյա պարբերականությամբ հրապարակում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցը աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի, այդ թվում հետազոտվող ժամանակաշրջանում միգրացիայի, վերաբերյալ հանրությանը տեղեկություններ ներկայացնելու նպատակով: Սույն զեկույցի հիմքը 2016թ. ՏՏԿԱՀ-ի արդյունքներով ձևավորված միկրոտվյալների բազան է, որում նկարագրվում է տեղեկատվություն 2013-2016թթ. բնակչության միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների վերջին տեղաշարժերի, նրանց բնութագրերի, ինչպես նաև մշտական բնակչության կազմում միգրանտների համակցության (ծննդավայրը՝ արտերկիր), նրանց սեռատարիքային կազմի, կրթական մակարդակի, զբաղվածության, առողջապահության հասանելիության, տրանսֆերտների և այլ տվյալների վերաբերյալ:

ՀՀ Միգրացիոն պատկերի պատրաստման աշխատանքները նախաձեռնել է Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելությունը՝ նպատակ ունենալով ձևավորված վերլուծական գործիքը կիրառել նաև հաջորդող տարիների ՏՏԿԱՀ արդյունքներով:

Հուսով ենք, որ սույն հրապարակումը տեղեկատվության լրացուցիչ աղբյուր կլինի Հայաստանում միգրացիոն շարժի վերջին զարգացումների և միգրանտների համակցության սոցիալ-ժողովրդագրական կազմի և կառուցվածքի վերաբերյալ տեղեկացված լինելու ցանկություն ունեցողների համար:

*Ստեփան Մնացականյան*  
*ՀՀ վիճակագրական*  
*կոմիտեի նախագահ*

*Իլոնա Տեր-Մինասյան*  
*Միգրացիայի միջազգային*  
*կազմակերպության Հայաստանի*  
*առաքելության ղեկավար*

*0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3*  
*Հեռախոս (+37411) 52-33-56*  
*Ֆաքս (+37411) 52-19-21*  
*Էլ. փոստ [info@armstat.am](mailto:info@armstat.am)*  
*ՀՀ վիճակագրական կոմիտեի կայք՝ <http://www.armstat.am>,*  
*<http://armstatbank.am>*

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՍՍ), 2019թ.

## Բովանդակություն

<b>ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ</b> .....	<b>4</b>
<b>ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ</b> .....	<b>7</b>
<b>ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐ</b> .....	<b>8</b>
<b>ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>15</b>
Ժողովրդագրություն .....	15
Տնտեսական ակտիվության և աշխատուժային զբաղմունքի մակարդակ .....	16
Զբոսաշրջություն .....	17
Կրթություն և մշակույթ .....	23
<b>ԴՐԱՍԱԿԱՆ ԵՎ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՀՈՍՔԵՐ (ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ)</b> .....	<b>25</b>
<b>ՀՂՈՒՄՆԵՐ</b> .....	<b>29</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ</b> .....	<b>30</b>

## Համառոտ ամփոփում

### Վերջին ժամանակաշրջանի միգրացիայի միտումները

2016թ. Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքների համաձայն, 2013-2016թթ. ընթացքում արտաքին միգրացիոն տեղաշարժերում ընդհանուր հաշվով ընդգրկված է եղել տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի 266 հազար անդամներ: ՏՏԿԱՀ-ի արդյունքներով արձանագրվել է, որ նշված միջակայքում նրանցից՝ ավելի քան 155 հազար մարդ մեկնել է երկրից (58.1%) և չի վերադարձել (մեկնածներ), 102 հազար անդամներ (38.5%)՝ վերադարձել են մեկնումներից, իսկ 9 հազարը (3.4%)՝ եղել են տնային տնտեսությունների նորեկ անդամներ (նոր ժամանածներ): Մեկնած միգրանտներից՝ շուրջ 19 հազար մարդու (12.3%) տեղաշարժը եղել է ներհանրապետական:

Մեկնած միգրանտների մեծամասնությունը եղել են տղամարդիկ, որոնք մեկնել են Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) քաղաքային վայրեր, ինչը համընկնում է այն փաստի հետ, որ վերադարձածների մեծամասնությունը ևս ՌԴ քաղաքային շրջաններից վերադաձած տղամարդիկ են եղել: Մեկնումների ծավալներն ավելի ինտենսիվ են եղել տարեսկզբին՝ հունվար-մարտ ամիսների ընթացքում, իսկ վերադարձինը՝ տարեվերջին, հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում: Նոր ժամանած միգրանտների շրջանում մեծամասնություն են կազմել կանայք, ովքեր հիմնականում ժամանել են Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրեր: Ընդ որում, հետազոտվող ժամանակահատվածում նոր ժամանումները բավական կայուն են եղել և ավելի մեծ ծավալներ են արձանագրվել փետրվար, հունիս ու նոյեմբեր ամիսներին:

Միգրանտների շրջանում որպես միգրացիայի հիմնական պատճառ է նշվել աշխատանքը, որոնց ավելի քան 70%-ի գործունեության ոլորտը եղել է շինարարությունը: Ընդ որում, դեպի Հայաստան միգրացիան պայմանավորված է եղել ամենատարբեր պատճառներով՝ բնակչություն հաստատելու, ընտանիք կազմելու և ընտանիքի վերամիավորման ու նաև աշխատելու համար: Նրանք զբաղված են եղել տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության, հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման, ինչպես նաև պետական կառավարման, պաշտպանության կամ պարտադիր սոցիալական ապահովության:

### Միգրանտների համակցությունը

Հայաստանի Հնարապետության մշտական բնակչությունից՝ 2.9 միլիոն, 2016թ.-ի դրությամբ արտերկրում ծնվածների թվաքանակը կազմել է 149 հազար մարդ: Սույն զեկույցում ծննդյան երկիրն օգտագործվել է որպես բնակչության միգրանտների համակցության փոխարինող: Նշված միգրանտների ծննդավայրը, հիմնականում, եղել են՝ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ), ՌԴ և Եվրոպական երկրները: Միգրանտների մեծամասնությունը կազմել են աշխատանքային ակտիվ կամ դրանից բարձր տարիքի կանայք: Հայաստանում ծնված բնակչության համեմատությամբ՝ միգրանտների շրջանում կանանց գլխավորած տնային տնտեսությունները գերազանցում են տղամարդկանց գլխավորած տնային տնտեսություններին: Բնակչության միգրանտ համակցության շրջանում զբաղվածությունը 1,8 տոկոսային կետով ավելի ցածր է, քան ՀՀ-ում ծնվածներինը: Միգրանտները հիմնականում զբաղված են եղել գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության մասնավոր

ձեռնարկություններում: Մյուս կողմից արձանագրվել է, որ միգրանտների կրթական մակարդակն ավելի բարձր է, քան ՀՀ-ում ծնվածներինը՝ բարձրագույն կրթություն ունեցողների 7.2 տոկոսային կետով ավելի բարձր մասնաբաժնով: Առողջապահության հասանելիությունը՝ թե՛ ՀՀ-ում ծնված և թե՛ միգրանտ բնակչության շրջանում եղել է նվազագույն:

### **Դրամական և ապրանքային հոսքեր (տրանսֆերտներ)**

Տրանսֆերտները սահմանվել են որպես հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում (այսինքն՝ 2015թ.) արտերկիր փոխանցված կանխիկ գումար կամ բնեղեն ապրանքներ: Վերջին միգրանտներից շուրջ 149 հազարը, որոնք կազմում են նրանց ընդհանուր թվաքանակի կեսից ավելին, տրանսֆերտներ են ուղարկել արտերկիր, հիմնականում ընտանիքի անմիջական անդամներին: Մշտական բնակչության շրջանում 2015թ.-ին տրանսֆերտներ է ուղարկել 15 հազար մարդ, իսկ ստացել է՝ 257 հազար մարդ: ՀՀ-ից տրանսֆերտներն ուղարկվել են ՌԴ, ԱՊՀ այլ և Եվրոպական երկրներ, իսկ դեպի Հայաստան տրանսֆերտները հիմնականում փոխանցվել են ՌԴ-ից: Թե՛ ելից և թե՛ մտից դրամական ու ապրանքային փոխանցումները օգտագործվել են հիմնականում ստացողի ընթացիկ սպառման ծախսերը հոգալու, այդ թվում ուսման, բուժման և այլ նպատակներով:

## Հիմնական արդյունքները

- 2016թ.-ի դրությամբ, ՀՀ ընդամենը 2.9 միլիոն մշտական բնակչության կազմում արձանագրվել է արտերկրներում ծնված 149 հազար մարդ, որոնց մեծամասնությունը ծնվել են Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) այլ երկրներում: Միգրանտների թվաքանակում գերակշռում են կանայք, 25 ու բարձր տարիքի անձիք և միջնակարգ կամ բարձրագույն կրթություն ունեցողները:
- 2013-2016թթ.-ի ընթացքում միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված բնակչությունից, ՀՀ-ից մեկնել է 155 հազար մարդ, վերադարձել՝ 102 հազար մարդ, առաջին անգամ տվյալ բնակավայր է ժամանել՝ 9 հազարը մարդ: Հիշյալ ժամանակահատվածում մեկնած միգրանտներից՝ շուրջ 19 հազար մարդու տեղաշարժը եղել է ներհանրապետական (մեկնած միգրանտների 12%-ը):
- Միգրացիայի վերջին միտումներով արձանագրվել է, որ Հայաստանից մեկնումների ծավալը գերակշռել է ժամանումների ծավալին, ինչի արդյունքում ձևավորվել է միգրացիայի մնացորդի բացասական ցուցանիշ:
- Միգրացիայի հիմնական պատճառը՝ միգրանտների շրջանում եղել է աշխատանքը: Ընդ որում, նոր ժամանածների կողմից տեղաշարժի պատճառները եղել են՝ բնակություն հաստատելը, ընտանիք կազմելը և ընտանիքի վերամիավորումն ու աշխատանքը:
- Մշտական բնակչության կազմից միգրանտների համակցությունը և վերադարձած/նոր ժամանած միգրանտների մեծամասնությունն աշխատել են գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտներում: Մեկնած և վերադարձած միգրանտների մեծամասնությունն աշխատել են շինարարության ոլորտում:
- 2015թ.-ին մշտական բնակչությունից, ընդհանուր հաշվով, տրանսֆերտներ են ուղարկել՝ 15 հազար մարդ և ստացել են՝ 257 հազար մարդ: Հայաստան փոխանցվող տրանսֆերտների ծագման երկիրը հիմնականում եղել է Ռուսաստանի Դաշնությունը:
- Ընդհանուր հաշվով 149 հազար վերջին միգրանտներ արտերկրից տրանսֆերտներ են փոխանցել, որոնց գերակշիռ մեծամասնությունն ուղարկվել է ընտանիքի անմիջական անդամներին:

## Տվյալների նկարագրությունը և սահմանումները

Մույն զեկույցը հիմնված է Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքների վրա, որն իրականացվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (Արմստատի) կողմից 2016թ.-ին: Ընտրանքը ձևավորման համար օգտագործվել է ներկայացուցչական հավանական ընտրանքի մեթոդը՝ իրականացված Համաշխարհային բանկի փորձագիտական օժանդակությամբ: Ընտրանքի համար հիմք է հանդիսացել երկրի բոլոր մասնավոր տնային տնտեսությունների հասցեների բազան, որը ստեղծվել է 2011թ.-ի մարդահամարի արդյունքների հիման վրա: Բոլոր հարցվածները Հայաստանի մշտական բնակիչներ են՝ *De Jure* բնակչությունը:<sup>1</sup> Ընտրանքը կազմելու համար գլխավոր համակցությունը բաժանվել է 32 ստրատայի, այդ թվում՝ Երևան քաղաքի 12 վարչական շրջանները, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերը: 2016թ.-ին ընտրվել է ընդամենը 5 184 տնային տնտեսություն, որից 3 240-ը քաղաքային և 1 944-ը՝ գյուղական բնակավայրերից (Համաշխարհային բանկ, 2016թ):

Մույն զեկույցում տվյալները ներկայացված են բացարձակ թվաքանակներով և տոկոսներով, որոնք հաշվարկվել են, հիմք ընդունելով հետազոտության հարցաթերթի հետևյալ բաժինները՝ (Ա) տնային տնտեսության անդամների ցուցակ, (Բ) միգրացիա, (Դ) զբաղվածություն, (Ե) կրթություն, (Թ) առողջություն (ընդհանուր) և առողջապահություն, և (Ը) դրամական ու ապրանքային հոսքեր տնային տնտեսությունների միջև (Համաշխարհային բանկ, 2016ա): Բոլոր արդյունքների նկատմամբ կիրառվել են Արմստատի կողմից մշակված բնակչության կշիռները: Մույն զեկույցում միգրանտների նույնականացման համար օգտագործվել է ծննդյան երկրի մասին ՏՏԿԱՀ-ից ստացված մանրամասն տեղեկատվությունը և որպես միգրանտների համակցություն են սահմանվել Հայաստանից դուրս ծնված անձիք:<sup>2</sup> Մշտական բնակչության կազմում նրանք դիտարկվել են որպես միգրանտների համակցություն: Ծննդյան երկրների մանրամասն ցանկը ներկայացված է Հավելվածի Աղյուսակ 1-ում:

Միգրացիոն հոսքերին հետևելու համար ՏՏԿԱՀ-ն հարցաթերթում ընդգրկված է հատուկ մոդուլ, որում արձանագրվել են 2013-2016թթ.-ի միգրացիայի վերջին դեպքերը և միգրանտների բնութագրերը:<sup>3</sup> Այն ներառում է մեկնած միգրանտների (այսինքն՝ անձանց, ովքեր մեկնել են և չեն վերադարձել), վերադարձած միգրանտների (այսինքն՝ անձանց, ովքեր մեկնել են և վերադարձել՝ 3 ամսից պակաս, 3-12 ամսվա ընթացքում, և 12 ամիս և ավելի երկար ժամկետով բացակայությունից հետո) և տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտների (այսինքն՝ առաջին անգամ) վերաբերյալ ստացված պատասխանները: Մոդուլն ընդգրկում է ոչ միայն միգրացիայի վերջին փոփոխությունները Հայաստանում, դեպի Հայաստան և ՀՀ-ից՝ արտասահման, այլև հարուստ բովանդակային տեղեկատվություն՝ միգրացիայի հիմնական պատճառների և միգրանտների սոցիալ-տնտեսական բնութագրերի վերաբերյալ:

<sup>1</sup> *De Jure* բնակչություն համարվում է հաշվառման ժամանակ ներկա և ժամանակավորապես (< 1 տարուց) բացակա անձիք:

<sup>2</sup> Սա վերաբերում է ՏՏԿԱՀ հարցաթերթում «ծննդավայրը» հարցին:

<sup>3</sup> ՏՏԿԱՀ մոդուլ Բ-ում հետազոտության հարցերն անդրադառնում են այն անձանց, ովքեր տեղաշարժվել են 2016թ. հունվարի 1-ից սկսած: Հետևաբար, սույն զեկույցում որպես վերջին միգրացիայի ժամանակաշրջան է սահմանված 2013-2016թթ. և ներկայված է այդ ժամանակաշրջանի վերաբերյալ հետազոտված տվյալները:



Մույն զեկույցում արտերկրում ծնված բնակչությունը դիտարկվել է որպես մշտական բնակչության կազմում՝ **միգրանտների համակցություն**: Ըստ այդմ, նրանց սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, այսինքն՝ ժողովրդագրական և տնային տնտեսությունների կառուցվածքի, զբաղվածության, կրթական մակարդակի և առողջապահության հասանելիությանն առնչվող տվյալները, համեմատվում են ՀՀ-ում ծնված բնակչության համապատասխան տվյալների հետ: ՏՏԿԱՀ-ի զբաղվածության վերաբերյալ տեղեկատվությունը վերաբերվում է 15-75 տարեկան բնակչությանը<sup>4</sup>, իսկ կրթական մակարդակը ներկայացված է երեք խոշոր դասերով՝ տարրական և ցածր, միջնակարգ և բարձրագույն:<sup>5</sup> **Առողջապահական ծառայությունների հասանելիությունը** համարվում է առողջության ապահովագրությունից օգտվելը կամ տնային տնտեսության առնվազն մեկ անդամի՝ հիմնական ծառայությունների փաթեթից (ՀՕՓ) օգտվելու իրավունքը:

**Տրանսֆերտները** սահմանվում են որպես կանխիկ կամ բնեղեն տեսքով արտերկիր կատարված փոխանցումները՝ հարցմանը նախորդող 12 ամսվա ընթացքում, որոնք վերջին միգրանտների և մշտական բնակչության կազմից՝ միգրանտների համակցության համար, զեկույցում ներկայացված են առանձին:

## Միգրացիոն հոսքեր

Միգրացիայի դինամիկան արտացոլելու համար Գծապատկեր 1-ում և Աղյուսակ 1-ում ներկայացված են 2013-2016թթ.-ի ընթացքում միգրացիայի՝ ՀՀ-ից մեկնելու, Հայաստան վերադարձի և նոր ժամանածների հոսքերի վերաբերյալ արձանագրված դեպքերը:

Զեկույցում առանձնացված են միգրանտների համակցության և միգրացիոն հոսքերի վերաբերյալ տվյալները: **Վերջին միգրանտները**՝ կամ ա) միգրանտներ են, ովքեր մեկնել և չեն վերադարձել, կամ՝ բ) Հայաստան վերադարձածներ են մեկնելուց հետո՝ 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս հետո կամ ավելի ուշ, կամ՝ գ) ժամանածներ են, ովքեր 2013-2016թթ.-ի ընթացքում առաջին անգամ են եկել տվյալ բնակավայր: Արտերկրում ծնված մշտական բնակիչները ներկայացված են՝ որպես **միգրանտների համակցություն**: Հաշվետու ժամանակաընթացքում իրենց բնակավայրից մեկնել են ընդհանուր հաշվով 155 հազար մշտական բնակիչ, վերադարձել՝ 102 հազար մարդ, և առաջին անգամ տվյալ բնակավայր է ժամանել 9 հազար մարդ:


Ըստ Աղյուսակ 1-ում և Գծապատկեր 1-ում ներկայացված տվյալների, մեկնած կամ վերադարձած բնակչության գերակշիռ մեծամասնության (համապատասխանաբար՝ 96.6%-ի և 92.0%-ի) ծննդավայրը եղել է ՀՀ-ն, իսկ մնացած փոքրաթիվ մասի (մեկնած միգրանտների 3.4%-ի և վերադարձած միգրանտների 8.0%-ի) ծննդավայրը՝ արտերկիրը: Նոր ժամանած միգրանտների ավելի քան կեսի (64.5%-ի) ծննդավայրը Հայաստանն է եղել: Գծապատկեր 2-ի տվյալները ցույց են տալիս, որ մեկնած միգրանտների 88.1%-ը և

<sup>4</sup> Պաշտոնական կենսաթոշակային տարիքը կանանց և տղամարդկանց համար 63 տարեկանն է:

<sup>5</sup> Տարրական կրթությունը ներառում է տարրականից բարձր մինչև ընդհանուր (հիմնական) կրթություն ունեցող բնակչությունը: Միջնակարգ կրթությունը ներառում է միջնակարգ կրթություն, ինչպես նաև արհեստագործական պատրաստություն ունեցող բնակչությունը: Բարձրագույն կրթությունը ներառում է համալսարանի բակալավրիատի և ավելի բարձր աստիճանի կրթություն ունեցող բնակչությունը:


վերադարձած միգրանտների 76.0%-ը կազմել են տղամարդիկ, իսկ նոր ժամանած միգրանտների շրջանում գերակշռել են կանայք (62.1%) :

**Գծապատկեր 1. 2013-2016թթ.-ին բնակչության շրջանում մեկնման, վերադարձի և նոր ժամանման դեպքերը, տոկոսներով**



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

**Գծապատկեր 2. Վերջին միգրանտների բաշխումն ըստ սեռի, տոկոսներով, 2013-2016թթ.**



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Վերը նշված առանձնահատկություններն ամփոփված են ստորև բերված Աղյուսակ 1-ում, որում ներառված են նաև մեկնած, վերադարձած և նոր ժամանած միգրանտների մեկնման կամ վերադարձի մարզը, երկիրը: Ընդհանուր հաշվով՝ ավելի քան 108 հազար մարդ

մեկնել է ՌԴ, որը կազմում է մեկնած միգրանտների 70.1 %-ը, իսկ 19 հազար մարդ (մեկնածների 12.3%-ը) տեղաշարժվել է երկրի ներսում<sup>6</sup>:

Հաշվետու ժամանակաշրջանում մեկնած միգրանտների միտումներին համահունչ՝ վերադարձածների մեծամասնությունը ևս վերադարձել է ՌԴ-ից (73.1%): Ինչ վերաբերում է նոր ժամանած միգրանտներին, ապա նրանք գերակշռում են Գեղարքունիքի (23.8%) և Արագածոտնի (12.7%) մարզերում, Արցախի Հանրապետությունում (20.2%): Ինչպես մեկնած, այնպես էլ վերադարձած միգրանտները գերադասում են քաղաքային բնակավայրերը՝ մեկնած միգրանտների 86.7%-ի և վերադարձածների 72.2%-ի համար որպես տեղակայման վայր է նշվել քաղաքները: Մյուս կողմից, առաջին անգամ ժամանած միգրանտները, համեմատաբար, ավելի հասավարաչափ են բաշխվել քաղաքային և գյուղական բնակավայրերում (55.9%-ը քաղաքային և 44.1%-ը գյուղական բնակավայրերում):

**Աղյուսակ 1. Միգրացիայի ծավալները և վայրը, 2013-2016թթ.**

	Միգրացիոն հոսքեր				Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը
	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը				
	Բացարձակ թվաքանակ				Տոկոսներով			
<i>Ծննդյան երկիրը</i>								
ՀՀ	149 812	94 399	5 851	<b>250 061</b>	96.6	92.0	64.5	<b>93.7</b>
Միգրանտներ	5 251	8 223	3 223	<b>16 698</b>	3.4	8.0	35.5	<b>6.3</b>
<b>Ընդամենը</b>	<b>155 063</b>	<b>102 622</b>	<b>9 074</b>	<b>266 759</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>Սեռը</i>								
Տղամարդիկ	136 655	78 040	3 436	<b>218 130</b>	88.1	76.0	37.9	<b>81.8</b>
Կանայք	18 408	24 582	5 639	<b>48 629</b>	11.9	24.0	62.1	<b>18.2</b>
<b>Ընդամենը</b>	<b>155 063</b>	<b>102 622</b>	<b>9 074</b>	<b>266 759</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>Մեկնման կամ վերադարձի մարզը / երկիրը</i>								
Երևան	11 694	1 799	300	<b>13 793</b>	7.5	1.8	3.3	<b>5.2</b>
Արագածոտն	372	0	1 156	<b>1 527</b>	0.2	0	12.7	<b>0.6</b>
Արարատ	633	0	0	<b>633</b>	0.4	0	0	<b>0.2</b>
Արմավիր	700	253	423	<b>1 376</b>	0.5	0.2	4.7	<b>0.5</b>
Գեղարքունիք	974	664	2.163	<b>3 801</b>	0.6	0.6	23.8	<b>1.4</b>
Լոռի	210	781	254	<b>1 245</b>	0.1	0.8	2.8	<b>0.5</b>
Կոտայք	295	599	200	<b>1 094</b>	0.2	0.6	2.2	<b>0.4</b>
Շիրակ	100	400	0	<b>500</b>	0.1	0.4	0	<b>0.2</b>
Սյունիք	1 861	1.066	294	<b>3 221</b>	1.2	1.0	3.2	<b>1.2</b>
Վայոց Ձոր	443	416	589	<b>1 447</b>	0.3	0.4	6.5	<b>0.5</b>
Տավուշ	1 811	1.540	688	<b>4 039</b>	1.2	1.5	7.6	<b>1.5</b>
Ռուսաստանի Դաշնություն	108 655	75.045	221	<b>183 921</b>	70.1	73.1	2.4	<b>68.9</b>
ԱՊՀ այլ երկրներ	722	4.717	317	<b>5 756</b>	0.5	4.6	3.5	<b>2.2</b>
Եվրոպական այլ երկրներ	3.854	4.022	0	<b>7 876</b>	2.5	3.9	0	<b>3</b>

<sup>6</sup> Ներքին միգրացիան վերաբերում է բոլոր վերջին միգրանտներին Հայաստանի մարզերում, այդ թվում՝ Երևանում, Արագածոտնում, Արարատում, Արմավիրում, Գեղարքունիքում, Լոռիում, Կոտայքում, Շիրակում, Սյունիքում, Վայոց Ձորում և Տավուշում:

Մեկնման կամ վերադարձի մարզը / երկիրը								
ԱՄՆ կամ Կանադա	730	350	0	1 080	0.5	0.3	0	0.4
Արցախի Հանրապետություն	21 013	9 256	1 835	32 104	13.6	9.0	20.2	12.0
Վրաստան	165	329	0	494	0.1	0.3	0	0.2
Այլ	833	1 384	635	2 852	0.5	1.3	7.0	1.1
<b>Ընդամենը</b>	<b>155 063</b>	<b>102 622</b>	<b>9 074</b>	<b>266 759</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Բնակավայրի տեսակը								
Քաղաքային	16 552	5 432	3 393	25 377	86.7	72.2	55.9	77.7
Գյուղական	2 540	2 087	2 673	7 300	13.3	27.8	44.1	22.3
<b>Ընդամենը</b>	<b>19 091</b>	<b>7 519</b>	<b>6 066</b>	<b>32 676</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Բ, Աղյուսակ 1 հարց 1 (ծննդավայրը), հարց 2 (Մեկնման կամ վերադարձի մարզը կամ երկիրը), և հարց 3 (բնակավայրի տեսակը): Մեկնած միգրանտներն անձիք են, ովքեր մեկնել են և չեն վերադարձել հաշվետու ժամանակաշրջանում: Վերադարձած միգրանտների կազմում ներառված են այն անձանց տվյալները, որոնց վերադարձն արձանագրվել է՝ 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս կամ ավելի ուշ: Նոր ժամանածները՝ տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտներն են: ԱՊՀ-ն՝ Անկախ պետությունների համագործակցության հասպտումն է:

Աղյուսակ 2-ում ներկայացված են հետազոտված ժամանակաշրջանում միգրացիայի վերջին շարժի տարեթիվի և ամսվա վերաբերյալ տվյալներ: Ընդ որում, ըստ միգրանտների վերջին շարժի՝ մեկնումների շուրջ կեսն արձանագրվել է 2016թ.-ին, իսկ վերադարձի դեպքերի ավելի քան 80 տոկոսը՝ 2015 և 2016թթ.-ներին: 2013-2016թթ.-ի ընթացքում տարեկան ժամանել է միջին հաշվով 2 269 մարդ:

Մեկնած և վերադարձած (այդ թվում՝ նաև նոր ժամանածներ) միգրանտների ամփոփ ցուցանիշների տարբերությունով հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված միգրացիայի մնացորդն ունեցել է բացասական նիշ<sup>7</sup>:

Ամիսների բաշխումով արձանագրված տվյալների համաձայն, ՀՀ-ից մեկնումներն ավելի ինտենսիվ են եղել տարեսկզբին՝ հունվար-մարտ ամիսներին (12.6%-ից մինչև 19.2%), իսկ վերադարձը՝ տարեվերջին, հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին (12.4%-17.7%):

**Աղյուսակ 2. Միգրանտների վերջին շարժն ըստ տարեթվի և ամսվա, 2013-2016թթ.**

	Միգրացիոն հոսքեր							
	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը
	Բացարձակ թվաքանակ				Տոկոսներով			
<i>Վերջին շարժի տարեթիվը</i>								
2013թ.	9 981	5 818	2 203	18 002	6,4	5,7	24,3	6,7
2014թ.	21 937	10 697	594	33 227	14,1	10,4	6,5	12,5
2015թ.	48 940	52 773	3 290	105 003	31,6	51,4	36,3	39,4
2016թ.	74 206	33 334	2 987	110 527	47,9	32,5	32,9	41,4
<b>Ընդամենը</b>	<b>155 063</b>	<b>102 622</b>	<b>9 074</b>	<b>266 759</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

<sup>7</sup> Միգրացիայի մնացորդը սահմանվում է՝ որպես ՀՀ ժամանածների (նորեկների և վերադարձածների) և երկրից մեկնածների տարբերություն (Եվրոստատ, 2000):

Վերջին շարժի ամիսը								
Հունվար	19 465	6 341	1 106	<b>26 911</b>	12.6	6.2	12.2	<b>10.1</b>
Փետրվար	23 555	3 273	1 838	<b>28 666</b>	15.2	3.2	20.2	<b>10.7</b>
Մարտ	29 745	2 947	103	<b>32 795</b>	19.2	2.9	1.1	<b>12.3</b>
Ապրիլ	15 657	3 205	1 140	<b>20 001</b>	10.1	3.1	12.6	<b>7.5</b>
Մայիս	14 410	5 150	138	<b>19 698</b>	9.3	5.0	1.5	<b>7.4</b>
Հունիս	11 174	6 991	1 558	<b>19 722</b>	7.2	6.8	17.2	<b>7.4</b>
Հուլիս	10 432	7 545	24	<b>18 000</b>	6.7	7.4	0.3	<b>6.7</b>
Օգոստոս	7 051	10 764	433	<b>18 248</b>	4.5	10.5	4.8	<b>6.8</b>
Սեպտեմբեր	9 374	9 941	671	<b>19 985</b>	6	9.7	7.4	<b>7.5</b>
Հոկտեմբեր	6 063	12 678	335	<b>19 075</b>	3.9	12.4	3.7	<b>7.2</b>
Նոյեմբեր	3 653	15 674	1 374	<b>20 701</b>	2.4	15.3	15.1	<b>7.8</b>
Դեկտեմբեր	4 485	18 115	356	<b>22 956</b>	2.9	17.7	3.9	<b>8.6</b>
<b>Ընդամենը</b>	<b>155 063</b>	<b>102 622</b>	<b>9 074</b>	<b>266 759</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Բ, Աղյուսակ 1 հարց 5 (միգրացիայի տարեթիվը), հարց 4 (միգրացիայի ամիսը Մեկնած միգրանտներն անձիք են, ովքեր մեկնել են և չեն վերադարձել հաշվետու ժամանակաշրջանում):

Վերադարձած միգրանտներն այն անձիք են, որոնց վերադարձն արձանագրվել է՝ 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս կամ ավելի ուշ: Նոր ժամանածները՝ տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտներն են:

Աղյուսակ 3, Գծապատկեր 3ա, 3բ և 3գ-ում ներկայացված են միգրանտների վերջին շարժի՝ միգրացիայի հիմնական պատճառները: Մեկնած միգրանտների գրեթե 70%-ի մեկնումը պայմանավորված է եղել աշխատելու և աշխատանք փնտրելու նպատակով: Վերադարձած միգրանտների կեսից ավելին (52.7%) նշել են, որ վերադարձել են աշխատելու կամ աշխատանք փնտրելու նպատակով, որին հաջորդել են՝ մասնավոր այցելությունների, օրինակ, ծանոթներին, ազգականներին այցելելը, զբոսաշրջությունը կամ բուժումը (14.7%) և ընտանիք կազմել/ ընտանիքի վերամիավորումով (14.3%) պայմանավորված պատճառները: Առաջին անգամ տվյալ բնակավայր ժամանածները որպես ժամանման պատճառներն են նշել՝ բնակություն հաստատելը (27.3%), ընտանիք կազմելը/ընտանիքի հետ վերամիավորվելը (26.6%) և աշխատանքը (16.0%): Ընդ որում, նոր ժամանածների (նորեկների) 1.7%-ի և վերադարձած միգրանտների 3.6%-ի ժամանաման/վերադարձի պատճառ է նշվել ուսումը կամ վերապատրաստումը:


### Աղյուսակ 3. Միգրանտների վերջին շարժի՝ միգրացիայի հիմնական պատճառները, 2013-2016թթ.

Միգրացիայի հիմնական պատճառները	Միգրացիոն հոսքեր							
	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը
	Բացարձակ թվաքանակ				Տոկոսներով			
Աշխատանք	103 343	54 107	1 455	<b>158 905</b>	66.6	52.7	16.0	<b>59.6</b>
Ընտանեկան	4 212	14 670	2 416	<b>21 298</b>	2.7	14.3	26.6	<b>8.0</b>
Բնակություն	8 096	907	2 475	<b>11 478</b>	5.2	0.9	27.3	<b>4.3</b>
Ուս. /վերապ.	8 286	3 699	156	<b>12 142</b>	5.3	3.6	1.7	<b>4.6</b>
Մասն. այց	3 001	15 093	0	<b>18 094</b>	1.9	14.7	0	<b>6.8</b>
Այլ	28 125	14 146	2 572	<b>44 843</b>	18.1	13.8	28.3	<b>16.8</b>
<b>Ընդամենը</b>	<b>155 063</b>	<b>102 622</b>	<b>9 074</b>	<b>266 759</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Բ, Աղյուսակ 1 հարց 6 (Միգրացիայի հիմնական պատճառները): Ընտանեկան ներառում են ընտանիք կազմելու, օրինակ՝ ամուսնանալու և ընտանիքի վերամիավորման հետ կապված պատճառները: Մասնավոր այցելությունը ներառում է, օրինակ՝ այցելություն ազգականներին և ծանոթներին, զբոսաշրջություն և բուժում: Մեկնած միգրանտներն անձիք են, ովքեր մեկնել և չեն վերադարձել հաշվետու ժամանակաշրջանում: Վերադարձած միգրանտներն այն անձիք են, որոնց վերադարձն արձանագրվել է՝ 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս կամ ավելի ուշ: Նոր ժամանածները՝ տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտներն են:

**Գծապատկերներ 3ա, 3բ և 3գ. Միգրացիայի հիմնական պատճառները՝ մեկնած միգրանտների (ձախից) վերադարձած միգրանտների (կենտրոնում) և նոր ժամանած միգրանտների (աջից) շրջանում, 2013-2016թթ.**



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով): Գծապատկեր 3ա՝ ձախից, Գծապատկեր 3բ՝ կենտրոնում և Գծապատկեր 3գ՝ աջից:

Աղյուսակ 4-ում ներկայացված են վերջին միգրանտների տնտեսական գործունեության տեսակները, ըստ՝ վերջին միգրացիայի ընթացքում նրանց կողմից ծախսված առավելագույն ժամանակի կամ ստացած առավելագույն եկամուտի: Արտերկրում գտնվելու ժամանակ ՀՀ-ից մեկնած միգրանտների շուրջ 75%-ն աշխատել է շինարարությունում, 7.2%-ն ընդգրկված է եղել արդյունաբերությունում, 6.4%-ը կատարել է մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման աշխատանք: Վերադարձած միգրանտների գերակշիռ մեծամասնությունը (84.5%) կատարել է շինարարական աշխատանքներ: Իսկ նոր ժամանած միգրանտները ձեռնարկել են ավելի տարատեսակ տնտեսական գործունեություն՝ նրանց 37.8% զբաղված է եղել գյուղատնտեսությամբ, անտառտնտեսությամբ և ձկնորսությամբ, 19.6%-ն աշխատել է հանքերում ու քարհանքերում, 13.9%-ը ներգրավված է եղել պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովության ոլորտներում:

**Աղյուսակ 4. Միգրանտների վերջին շարժն ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների (NACE Rev: 2), 2013-2016թթ.**

Հիմնական տնտեսական գործունեությունը (NACE Rev:2)	Միգրացիոն հոսքեր							Ընդամենը
	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	
	Բացարձակ թվաքանակ				Տոկոսներով			
Կացության և հանրային սննդի կազմակերպում	902	1338	0	2 240	0.8	2.3	0	1.3
Վարչական և օժանդակ գործունեություն	273	0	0	273	0.3	0	0	0.2
Գյուղատնտեսություն. Անտառտնտեսություն և ձկնորսություն	442	0	1.176	618	0.4	0	37.8	1.0

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	893	294	0	<b>1 187</b>	0.8	0.5	0	<b>0.7</b>
Շինարարություն	80 226	49.144	345	<b>129 715</b>	74.8	84.5	11.1	<b>77.0</b>
Կրթություն	788	200	0	<b>987</b>	0.7	0.3	0	<b>0.6</b>
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	0	200	0	<b>200</b>	0	0.3	0	<b>0.1</b>
SS և տեղեկատվական այլ ծառայություններ	165	0	0	<b>165</b>	0.2	0	0	<b>0.1</b>
Իրավաբանական և հաշվապահական գործունեություն, կառավարման, ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն, տեխնիկական փորձարկումներ և վերլուծական աշխատանքներ	558	0	0	<b>558</b>	0.5	0	0	<b>0.3</b>
Արդյունաբերություն	7 757	2.157	0	<b>9 914</b>	7.2	3.7	0	<b>5.9</b>
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	0	0	612	<b>612</b>	0	0	19,6	<b>0.4</b>
Այլ պրոֆեսիոնալ, գիտական և փորձագիտական գործունեություն	91	0	0	<b>91</b>	0.1	0	0	<b>0.1</b>
Սպասարկման այլ ծառայություններ	1 296	701	294	<b>2 292</b>	1.2	1.2	9,5	<b>1.4</b>
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	1 571	538	433	<b>2 542</b>	1.5	0.9	13,9	<b>1.5</b>
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0	24	0	<b>24</b>	0	0	0	<b>0</b>
Հեռահաղորդակցություն	0	51	0	<b>51</b>	0	0.1	0	<b>0</b>
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	5 366	1.610	254	<b>7 230</b>	5.0	2.8	8,2	<b>4.3</b>
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլերի նորոգում	6 875	1.903	0	<b>8 778</b>	6.4	3.3	0	<b>5.2</b>
<b>Ընդամենը</b>	<b>107 203</b>	<b>58 160</b>	<b>3 114</b>	<b>168 476</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Բ, Աղյուսակ 1 հարց 8 (հիմնական տնտեսական գործունեությունը, այսինքն՝ աշխատանքներ, որ վերջին միգրացիայի ընթացքում իրականացրել են իրենց ժամանակի մեծ մասի տրամադրումով կամ ստացել են առավելագույն աշխատավարձ/եկամուտ: Մեկնած միգրանտներն անձիք են, ովքեր մեկնել և չեն վերադարձել: Վերադարձած միգրանտները այն անձիք են, ովքեր վերադարձել են 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս անց կամ ավելի ուշ: Նոր ժամանածները՝ տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտներն են:

## Միգրանտների համակցությունը

### Ժողովրդագրություն

2016թ.-ին Հայաստանի մշտական բնակչության (2.9 միլիոն) կազմում՝ 95.0%-ը կազմել են ՀՀ-ում ծնվածները և 5.0%-ը՝ արտերկրում ծնվածները (միգրանտները): Աղյուսակ 5-ում թվարկված են միգրանտներն ըստ նրանց ծննդավայրի՝ 1) ԱՊՀ այլ երկրներում (2.8%), 2) ՌԴ-ում (0.8%) և 3), Եվրոպական այլ երկրներում (0.1%): Աղյուսակ 6-ում ներկայացված է մշտական բնակչությունը՝ ըստ սեռի և տարիքային բաշխվածության: Բնակչության կազմում գերակշռում են կանայք թե՛ ՀՀ-ում ծնված, և թե՛ միգրանտ բնակչության շրջանում (երկրում ծնվածների 52.1%-ը, միգրանտների՝ 60.6%-ը): Միգրանտ բնակչության մեծամասնությունը (87.5%) կազմել են 25 և բարձր՝ ակտիվ աշխատանքային տարիքի անձիք, ՀՀ-ում ծնված բնակչության՝ 67.1%-ի համեմատ: Մինչև 5 տարեկան երեխաները կազմել են միգրանտների ընդամենը 1.3%-ը, ՀՀ-ում ծնված բնակչության՝ 8.0%-ի համեմատ:

**Աղյուսակ 5. Բնակչության բաշխումն ըստ ծննդյան երկրի, 2016թ.**

Ծննդյան երկիրը՝ մանրամասն	Բացարձակ թվաքանակ	Տոկոսներով
Հայաստան	2 833 596	95.0
Ռուսաստանի Դաշնություն	23 392	0.8
ԱՊՀ այլ երկրներ	83 607	2.8
Եվրոպական այլ երկրներ	2 943	0.1
Այլ	39 637	1.3
<b>Ընդամենը</b>	<b>2 983 174</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Ա, Աղյուսակ 1 հարց 6 (ծննդավայրը): Այս զեկույցում Հայաստանից դուրս ծնված անձիք դասակարգվում են որպես միգրանտների համակցություն: Նրանք կազմում են բնակչության 5.0% -ը: ԱՊՀ-ն՝ Անկախ պետությունների համագործակցության հապավումն է:

**Աղյուսակ 6. Բնակչության բաշխումը՝ ըստ սեռի և տարիքի, 2016թ.**

	Ծննդյան երկիրը			Միգրանտների համակցություն		
	ՀՀ-ում ծնված	Միգրանտների համակցություն	Ընդամենը	ՀՀ-ում ծնված	Միգրանտների համակցություն	Ընդամենը
	Բացարձակ թվաքանակ			Տոկոսներով		
<b>Սեռը</b>						
Տղամարդիկ	1 358 076	58 881	<b>1 416 957</b>	47.9	39.4	<b>47.5</b>
Կանայք	1 475 520	90 697	<b>1 566 217</b>	52.1	60.6	<b>52.5</b>
<b>Ընդամենը</b>	<b>2 833 596</b>	<b>149 578</b>	<b>2 983 174</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
<b>Տարիքային բաշխում</b>						
0-5 տարեկան	225 754	1 999	<b>227 753</b>	8.0	1.3	<b>7.6</b>
6-14 տարեկան	334 058	5 634	<b>339 692</b>	11.8	3.8	<b>11.4</b>
15-24 տարեկան	374 088	11 140	<b>385 228</b>	13.2	7.4	<b>12.9</b>
25-62 տարեկան	1 498 362	74 750	<b>1 573 111</b>	52.9	50.0	<b>52.7</b>
63 տարեկան և ավելի	401 334	56 056	<b>457 390</b>	14.2	37.5	<b>15.3</b>
<b>Ընդամենը</b>	<b>2 833 596</b>	<b>149 578</b>	<b>2 983 174</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Ա, Աղյուսակ 1 հարց 1 (սեռը), հարց 3 և 4 (ծննդյան ամիսը և տարեթիվը): Հայաստանում կանանց և տղամարդկանց կենսաթոշակի անցնելու տարիքը՝ 63-ն է: Միգրանտների համակցությունը կազմում են Հայաստանից դուրս ծնված անձիք:



## Տնային տնտեսությունների կազմը

Աղյուսակ 7-ում ներկայացված է տնային տնտեսությունների կազմը: Միգրանտների 20.1%-ը բնակվել է մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունում: Հայաստանում ծնված բնակչության շրջանում ամենատարածվածը երկու անձից բաղկացած տնային տնտեսություններն են եղել՝ 17.3%:

**Աղյուսակ 7. Բնակչությունն ըստ տնային տնտեսությունների կազմի, 2016թ.**


Տնային տնտեսության չափը	Ծնողյան երկիրը					
	ՀՀ-ում ծնված	Միգրանտների համակցություն	Ընդամենը	ՀՀ-ում ծնված	Միգրանտների համակցություն	Ընդամենը
	Բացարձակ թվաքանակ			Տոկոսներով		
1	97.178	13.852	<b>111.030</b>	13.2	20.1	<b>13.8</b>
2	126.878	13.053	<b>139.931</b>	17.3	18.9	<b>17.4</b>
3	117.223	9.010	<b>126.233</b>	15.9	13.1	<b>15.7</b>
4	146.756	11.248	<b>158.005</b>	20	16.3	<b>19.7</b>
5	111.625	10.638	<b>122.264</b>	15.2	15.4	<b>15.2</b>
6	84.456	5.964	<b>90.419</b>	11.5	8.7	<b>11.2</b>
7	32.882	2.927	<b>35.809</b>	4.5	4.2	<b>4.5</b>
8 և ավելի	17.990	2.205	<b>20.195</b>	2.4	3.2	<b>2.5</b>
<b>Ընդամենը</b>	<b>734.989</b>	<b>68.896</b>	<b>803.885</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Ա, Աղյուսակ 1 հարց 6 (ծննդավայրը): Միգրանտներ են համարվել Հայաստանից դուրս ծնված անձիք:

Գծապատկեր 4-ում ներկայացված է միգրանտների շրջանում կանանց գլխավորած տնային տնտեսությունների տեսակարար կշիռը (46.7%), որն ավելի բարձր է, քան ՀՀ-ում ծնվածներինը (31.5%): Աղյուսակ 8-ում ներկայացված են տնային տնտեսությունների գլխավոր բնութագրիչները: Տնային տնտեսությունների երկու տարատեսակների դեպքում էլ գլխավորների ավելի քան 40%-ը կազմել են 63 տարեկան և ավելի բարձր տարիքի անձիք: Բացի այդ, մանրամասն վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ տնային տնտեսությունների գլխավորի տարիքը, միջին հաշվով, միգրանտների դեպքում կազմել է 64 տարեկանը, ՀՀ-ում ծնվածների՝ 58 տարեկանի համեմատությամբ:

**Գծապատկեր 4. Տնային տնտեսությունների գլխավորների բաշխումն ըստ սեռի, 2016թ.,%**



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

**Աղյուսակ 8. Տնային տնտեսությունների գլխավորի բնութագրիչները, 2016թ.**

	Ծննդյան երկիրը			ՀՀ-ում ծնված	Միգրանտների համակցություն	Ընդամենը
	ՀՀ-ում ծնված	Միգրանտների համակցություն	Ընդամենը			
	Բացարձակ թվաքանակ			Տոկոսներով		
<b>Մեղր</b>						
Տղամարդիկ	503 205	36 729	<b>539 934</b>	68.5	53.3	<b>67.2</b>
Կանայք	231 784	32 167	<b>263 951</b>	31.5	46.7	<b>32.8</b>
<b>Ընդամենը</b>	<b>734 989</b>	<b>68 896</b>	<b>803 885</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
<b>Տարիքային բաշխումը</b>						
15-35 տարեկան	50 048	3 242	<b>53 290</b>	6.8	4.7	<b>6.6</b>
36-50 տարեկան	153 069	7 101	<b>160 170</b>	20.8	10,3	<b>19.9</b>
51-62 տարեկան	253 190	20 722	<b>273 912</b>	34.4	30,1	<b>34.1</b>
63 տարեկան և բարձր	278 683	37 831	<b>316 514</b>	37.9	54,9	<b>39.4</b>
<b>Ընդամենը</b>	<b>734 989</b>	<b>68 896</b>	<b>803 885</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
<b>Ծննդյան երկիրը՝ մանրամասն</b>						
Հայաստան	734 989	0	<b>734 989</b>	100	0	<b>91.4</b>
Ռուսաստանի Դաշնություն	0	6 607	<b>6 607</b>	0	9,6	<b>0.8</b>
ԱՊՀ այլ երկրներ	0	41 066	<b>4 066</b>	0	59,6	<b>5.1</b>
Այլ	0	21 224	<b>21 224</b>	0	30,8	<b>2.6</b>
<b>Ընդամենը</b>	<b>734 989</b>	<b>68 896</b>	<b>803 885</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2016թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Ա, Աղյուսակ 1 հարց 2 (կապը տնային տնտեսության գլխավորի հետ):

